ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 12 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի

Անդամակցությամբ՝ Ս. Սաֆարյանի

Հ. Թովմասյանի

Քննության առնելով Գևորգ Պապյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Գևորգ Պապյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը (ներկայացուցիչ՝ փաստաբան Լ. Գրիգորյան) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի օգոստոսի 23-ին, որով Դիմողը խնդրել է.

«Հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ և 69-րդ հոդվածները, և հաշվի առնելով Սահմանադրության 1-ին, 3-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածների պահանջները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդ-

վածի 5-րդ մասին Դատարանների կողմից տրված մեկնաբանությունը ճանաչել Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով գործին մասնակից չդարձված անձի կողմից բողոք բերելու դեպքում եռամսյա ժամկետի սկիզբը չի հաշվարկվում այն պահից, երբ անձի մոտ ծագել է դատարան դիմելու «իրավական շահագրգռվածություն», կամ որ նույնն է՝ դատական ակտը կայացվել է գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ»:

2. Դիմողը, մասնավորապես, նշում է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են դատարանների կողմից վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է:

Դիմողը գտնում է, որ թիվ ՍՆԴ/0661/04/21 սնանկության գործով դատարանների կողմից տրված մեկնաբանությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձած անձի կողմից բողոք բերելու դեպքում դատարանների կողմից գնահատվում է բողոք բերելու համար սահմանված եռամսյա ժամկետը պահպանված լինելու կամ չլինելու հանգամանքը՝ առանց հաշվի առնելու բողոքաբերի մոտ դատարան դիմելու «իրավական շահագրգռվածության» ծագման պահը:

Դիմողի պնդմամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 5-րդ մասին տրված մեկնաբանությունը հակասում է գործին մասնակից չդարձած անձի կողմից դատական ակտը բողոքարկելու իրավական ինստիտուտի գործառութային առաքելությանը և նպատակին, քանի որ ստացվում է, որ դատարանների կողմից վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված սխալները չեն վերացվում, անօրինական դատական ակտերը շարունակում են գոյություն ունենալ և իրավական հետևանքներ առաջացնել:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը բավարար չափով և հստակությամբ չի ծառայում արդար դատաքննությանը, քանի որ դատական ակտի

վերանայման ինստիտուտի ներդրումն ուղղված է սխալ դատական ակտի վերացմանը և անձանց խախտված իրավունքների վերականգնմանը:

Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթը դատարանների կողմից այնպիսի մեկնաբանություն է ստացել, որի պայմաններում իրավական անորոշություն է առաջացել, որը հանգեցրել է իր դատական պաշտպանության իրավունքի խախտմանը, ինչն էլ, իր հերթին, հանգեցրել է իր սեփականության իրավունքի ոտնահարմանը:

Ամփոփելով՝ Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթին դատարանների կողմից տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ հաշվի առնելով նաև Սահմանադրության 1-ին, 3-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով գործին մասնակից չդարձած անձի կողմից բողոք բերվելու դեպքում եռամսյա ժամկետի սկիզբը չի հաշվարկվում այն պահից, երբ անձի մոտ ծագել է դատարան դիմելու «իրավական շահագրգռվածություն», կամ որ նույնն է՝ դատական ակտը կայացվել է գործին մասնակից չդարձած անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը ***հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրության հիշյալ դրույթն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը ***հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման***՝ *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է,* ***և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը հիշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող **անհատական դիմումի հիմնավորված լինելու պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի/ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և այդ հիմնական իրավունքի/ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում **բավարար հիմնավորումներ չի ներկայացրել իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների խախտման, հետևաբար՝ դրանց ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Դիմողի կողմից բարձրացված՝ վիճարկվող օրինադրույթի՝ Սահմանադրության 75, 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ դրանք կարող են քննարկման առարկա դառնալ միայն Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված

որևէ հիմնական իրավունքի/ազատության սահմանափակման լույսի ներքո: Սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողի կողմից վիճարկվող դրույթի՝ իր հիմնական իրավունքի/ազատության խախտման հանգեցնելը բավարար չափով չհիմնավորելը բացառում է վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի քննարկումը Սահմանադրության վերոնշյալ հոդվածներին համապատասխանության հարցի համատեքստում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, և գործի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գևորգ Պապյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Է. Շաթիրյան

Անդամներ՝ Ս. Սաֆարյան

Հ. Թովմասյան

12 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-46